«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՆԱՏԱԼՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐԶ ՝ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԱՊԱՐԱՆԻ № 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

1. Ներածություն. Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը անձի արժեքային համակարգի ձևավորման կարևոր բաղադրիչ_____էջ 2

1.1. Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդիականությունը____էջ 3

1.2. Հետազոտության նպատակը_____էջ 4

1.3. Հետազոտության խնդիրները_____էջ 4

2. Էկոլոգիական կրթությունը և կայուն զարգացման սկզբունքները_____էջ 5

2.1.Էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգը Հայաստանում_____էջ 6

2.2. Դպրոցական աշխարհագրության դերը Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում_____էջ 7-8

3. Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը աշխարհագրության դասերին Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների համատեքստում_____էջ 9

3.1. Ապարան համայնքի շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի ամփոփ նկարագիրը_____էջ 10

4. Ապարան համայնքի էկոլոգիական խնդիրները աշխարհագրության դասերին ներառելու օրինակներ_____էջ11

4.1. Էկոլոգիական դաստիարակությունը ներդասարակական պարապմունքների ժամանակ_____էջ 11-13

4.2. Էկոլոգիական դաստիարակությունը արտադասարակական պարապմունքների ժամանակ_____էջ 14-16

5. Եզրակացություն_____էջ 17-18

6. Գրականություն _____էջ 19

Ներածություն

1. Էկոլոգիական կրթությունը անձի արժեքային համակարգի ձևավորման կարևոր բաղադրիչ

Ըստ հանրակրթական պետական կրթակարգի, միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագիրը՝ լինի հայրենասեր, ճանաչի իր հայրենիքը, իմանա իր երկրի նվաճումների մասին, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, ունենա ինքնուրույն մտածելակերպ, իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները, <u>ներառում է նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանի նկարագիրը</u>:

Վերջինս, անձի արժեքային համակարգի կարևոր բաղադրիչն է, հատկապես այսօր, երբ աշխարհի բնակչությունը և նյութական արտադրությունն աճում են վիթխարի չափերով և աննախադեպ թափով: Մարդու գործունեությունից տուժում է երկիր մոլորակը, որը <u>բնության խնամքի և պահպանության, պաշտպանի կարիք ունի:</u>

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում ընդունվել են բնապահպանության և բնօգտագործման մասին պետական օրենքներ, որոնց հիման վրա տնտեսության տարբեր բնագավառների ու աշխատանքների կոնկրետ տեսակների համար մշակվել են բնօգտագործման և բնապահպանական կանոններ ու նորմատիվներ:

Սակայն կյանքը ցույց է տալիս, որ դրանք բավարար չեն օրեցօր խորացող գլոբալ, տարածաշրջանային և տեղական բնապահպանական հիմնախնդիրների լուծման ու նորերը կանխելու համար, քանի որ <u>բնակչության նշանակելի մասը բավարար չափով իրազեկ չէ,</u> ինչպես ազգային, այնպես էլ համընդհանուր էկոլոգիական հիմնախնդիրներին:

Ուստի, այսօր կարևորվում է բնակչության տարիքային բոլոր խմբերի <u>էկոլոգիական գիտելիքների մակարդակի և իրազեկության բարձրացումը, էկոլոգիական մտածելակերպի և էկոլոգիական մշակույթի (կուլտուրայի) ձևավորումը</u> ՝ հասարակության յուրաքանչյուր անդամի արժեքային դիրքորոշումը, վարքագիծը, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը, ակտիվ մասնակցությունը բնապահպանական գործընթացներում:

1.1. Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդիականությունը:

- Վերջին տասնամյակներում աշխարհում, ինչպես նաև մեր հանրապետությունում սրվել են գլոբալ և ազգային էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք վտանգավոր են դարձել բնության ամբողջականության, կայունության և առաջին հերթին մարդկային հասարակության գոյության համար: Ներկայումս արտադրության զարգացման տեմպերն ու ծավալներն ավելին են, քան այն հնարավորությունները, որոնք ունի կենսոլորտը:

  Դիտարկումները ցույց են տալիս, որ վերջին 30-40 տարիների ընթացքում ավելացել է բնական, ինչպես նաև տեխնածին աղետների քանակը, որի գլխավոր պատճառը անթրոպոգեն բաղադրիչն է, նրա գործունեությունը:
- Սկսած XX դարի 70-ական թվականներից՝ մարդկությունը լրջորեն սկսել է մտահոգվել շրջակա միջավայրի պահպանության հարցերով: Այդ մտահոգությունը մտել է դպրոց, քանի որ անձի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, էկոլոգիական մշակույթ (կուլտուրա) ունեցող, էկոլոգիական մտածողությամբ օժտված քաղաքացու ձևավորումը դարձել է <u>դարի հրամայական:</u>
- Ներկայումս Հայաստանի բնակչության զգալի մասը բավարար չափով իրազեկ չէ հանրապետության ինչպես ազգային, այնպես էլ համընդհանուր էկոլոգիական հիմնախնդիրներին, իրազեկ չէ այդ հիմնախնդիրների առաջացման պատճառներին ու դրանց հետևանքներին:
- Անհրաժեշտ է դպրոցում դասավանդվող համարյա բոլոր առարկաներն ու դասընթացները ընդգրկել Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում, ուսումնադաստիարակչական գործունեությամբ նպաստել այնպիսի հասարակության ձևավորմանը, որի յուրաքանչյուր անդամ, ոչ միայն տեղյակ լինի բնապահպանական հիմնախնդիրներին և մտահոգված լինի դրանցով, <u>այլ նաև ունենա որոշակի գիտելիքներ, հմտություններ, և գլխավորը՝ ցանկություն, թե' անհատապես, թե' միասնական ջանքերով, ակտիվորեն մասնակցելու գոյություն ունեցող բնապահպանական խնդիրների լուծման և նորերը կանխելու գործին:</u> Հետևաբար, էկոկրթության համակարգի զարգացումը աշխարհի բոլոր երկրներում, և իհարկե մեզանում արդիական է, անհրաժեշտ:

1.2. Հետազոտության նպատակն է՝

Հետազոտության հիմնական նպատակն է աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում

- բարձրացնել աշակերտների էկոլոգիական կրթության և դաստիարակությանմակարդակը,
- զարգացնել նրանց էկոլոգիական մտածողությունն ու աշխարհայացքը,
- ձևավորել շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1.3. Հետազոտության խնդիրն է՝

- ուսումնասիրել և վերլուծել էկոլոգիական կրթության և դաստիարակությանվերաբերյալ մասնագիտական գրականությունը.
- առանձնացել դպրոցական աշխարհագրություն առարկայի առանձնահատուկդերը աշակերտների էկոլոգիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման գործում.
- կարևորել Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների աշակերտներիիմացությունը էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում:
- լուսաբանել էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի իմփորձը աշխարհագրության դասաժամերին և արտադասարանական պարապմունքների ընթացքում.

2. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ներկայումս մարդու և բնության փոխազդեցությունը հանգեցրել է համաշխարհային նշանակություն ունեցող էկոլոգիական մի շարք խնդիրների, երբ խախտվում է նյութի բնական շրջապտույտը, համակարգերի կապը, դեգրադացվում է միջավայրը, անհետանում են բուսական ու կենդանական տեսակները, շատանում են մարդկանց հիվանդությունները, կարճատվում է կյանքի տևողությունը:

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ հասարակության մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման՝ տնտեսական աճից դեպի կայուն զարգացում սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեքային համակարգի և վարքագծի կողմնորոշմանն ու էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:



Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը տեսական գիտելիքից ու գործնական ունակություններից զատ, նախ և առաջ մոտեցում է և միջոց՝ մարդու և բնության միջև կապը հասկանալու, պարզաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի հանդեպ առանձին անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով:

Էկոլոգիական մշակույթը շրջակա միջավայրի հետ մարդկության կենսագործունեության ժառանգած փորձն է, որը նպաստում է առողջ կենսակերպին, երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, կյանքի որակի բարելավմանը և էկոլոգիական անվտանգությանը: Հասարակության էկոլոգիական մշակույթի ձևավորումը պետության գերակա ուղղություններից է:

2.1. Էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգը Հայաստանում

Դեռևս 2001թ. Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց « Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին » օրենքը: Համաձայն օրենքի, էկոլոգիական կրթությունը պետք է իրականացվի մարդու ողջ կյանքի ընթացքում վաղ մանկությունից սկսած մինչև հասուն տարիք, էկոլոգիական աշխարհայացքի և բնապահպանական գործընթացում անձի մասնակցության գիտակցության ձևավորմամբ:

Էկոլոգիական կրթության համակարգում առանձնահատուկ է դպրոցի դերը, քանի որ էկոլոգիական գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է հենց այստեղ:
Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը կազմակերպվում է առարկայական չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների միջոցով:

ՀՀ անընդմեջ կամ չընդհատվող էկոլոգիական կրթության համակարգը կազմված է հետևյալ մակարդակներից՝ նախադպրոցական, միջնակարգ (տարրական կրթություն, հիմնական կրթություն, միջնակարգ կրթություն), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և հասարակական:



2.2 Դպրոցական աշխարհագրության դերը էկոլոգիականկրթության և դաստիարակության գործում

Հայտնի է որ, էկոլոգիական դաստիարակությունն ունի միջառարկայական բնույթ և այդ գործընթացում հիմնական դերը պատկանում է բնական գիտություններին՝ աշխարհագրություն, բնագիտություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա առարկաներին: Սակայն էկոլոգիական դաստիարակության գործում դպրոցական աշխարհագրությունն ունի բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ:

Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում:

Աշխարհագրությունն է, որ երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք:

Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն մարդու և շրջակա միջավայրի, հեռու ու մոտիկ հարևանների միջև, դրանով իսկ նպաստում է սովորողի ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ՝

աշխարհագրական քարտեզից օգտվելու, տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու, ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու, աշխարհագրական տեղեկատվական համակարգից(GIS) և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններ:

Դպրոցական աշխարհագրությունը կարևոր դեր ունի նաև սովորողների դիտողունակությունը, երևակայությունը, տրամաբանությունը, հիշողությունը զարգացնելու գործում: Դպրոցականների տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին համապատասխան հետևություններ կատարել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ:

Աշխարհագրությունը կարևոր դերակատարում ունի նաև երիտասարդ սերնդի դաստիարակության՝ արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:

- Այսպես, տարրական դպրոցն ավարտողը ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ:

- Միջին դպրոցն ավարտողը պետք է գիտակցի բնական պաշարների սահմանափակությունը, մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը, գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը բնական միջավայրի պահպանման գործում, ունենա ազգային ինքագիտակցություն, կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը, գիտակցի կրթվելու, ամբողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու կարևությունը:

Այսպիսով, ելնելով «Աշխարհագրություն» ուսումնական առարկայի չափորոշչի և ծրագրի հայեցակարգում ներառված վերը նշված դրույթներից, կարող ենք փաստել, որ սովորողների էկոլոգիական դաստիարակության գործում կարևոր է, հատկապես աշխարհագրության նշանակությունը: Աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում են դպրոցականները ձեռք բերում բնապահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վերաբերյալ գիտելիքների , կարողությունների ու հմտությունների այն ծավալը, որն անհրաժեշտ է էկոլոգիական մտածողության, էկոլոգիական կուլտուրայի՝ վարքագծի ձևավորման համար:

3. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ինչպես գիտենք, աշխարհագրությունը, համեմատած այլ ուսումնական առարկաների հետ էկոլոգիական խնդիրները դիտարկում է երեք մակարդակներում՝ գլոբալ, տարածաշրջանային և տեղական:

Աշխարհագրության դասերի ընթացքում կարևորում եմ տեղական էկոլոգիական խնդիրների լուսաբանումը, այն հիմնահարցերի, որոնք վերաբերվում են անմիջապես մեր շրջապատին: Այդ խնդիրների առաջացման պատճառների և լուծման ուղիների սովորողների տեղեկացվածությունը, որոշ խնդիրների շտկման գործընթացներին նրանց մասնակցությանը, ձևավորելու է դրանք գնահատելու և կանխելու որոշակի հմտություններ, որոնք նրանք կփոխանցեն նաև ընտանիքի անդամներին և ընկերներին:

Հայրենի համայնքում գոյություն ունեցող բնապահպանական խնդիրների իմացությունը, կարծում եմ կնպաստի երեխաների՝ գլոբալ և տարածաշրջանային էկոլոգիական խնդիրների, բնական երևույթների, բնության օրենքների և օրինաչափությունների ընկալմանը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման անհրաժեշտության գիտակցմանը, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վիճակի փոխազդեցության վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:
Համայնքի էկոլոգիական խնդիրների ուսումնասիրության, այդ խնդիրների լուծման ու մասնակցության գործընթացը սկսվում է ներդասարանային, իսկ հետո շարունակվում արտադասարանական պարապմունքների ժամանակ:
Այդ պարապմունքները նպաստում են երեխաների դիտարկելու, հետազոտելու, նկարագրելու, բացատրելու, համադրելու ունակությունների զարգացմանը , ինչպես նաև տրամաբանական մտածողության, էկոլոգիական խնդիրները կանխագուշակելու, եզրակացություն անելու կարողությունների ձևավորմանը:
Ուսուցման ընթացքում կիրառվում են տեսական և ակտիվ ուսման ամենատարբեր ձևեր (զրույց, բանավեճ, քննարկում, դասախոսություն,տեսաֆիլմերի դիտումներ, պրեզենտացիաներ, էքսկուրսիաներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ, դաշտային հետազոտական աշխատանքներ, ծառատունկ և շաբաթօրյակներ):

3.1. Ապարան համայնքի շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի ամփոփ նկարագիրը

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական ճգնաժամն ու բնակչության սոցիալական վատ վիճակը, ոլորտի վերահսկողության անբավարար մակարդակն ու հասարակության ցածր էկոլոգիական գիտակցությունը էականորեն բացասական ազդեցություն են ունեցել Ապարան համայնքի բնապահպանական իրավիճակի վրա:

Համայնքում, ինչպես բնածին, այնպես էլ մարդածին գործոնների ազդեցության հետևանքով բավականին բարձր է բնական միջավայրի բաղադրիչների խոցելիության աստիճանը և համայնքում կան հրատապ լուծման կարիք ունեցող մոտ մեկ տասնյակ բնապահպանական հիմնախնդիր:

Առաջնային են կենցաղային թափոնների կառավարման, հանքարդյունաբերության թափոնների՝ պոչամբարների ռեկուլտիվացման, կենսաբազմազանության և հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ կառավարման, քաղաքի կոյուղագծերի և հոսքաջրերի մաքրման կայանի վերականգնման, կանաչ գոտիների ստեղծման, ալպյան մարգագետիններում հրդեհումների, օդային ավազանի աղտոտման և աղմուկի մակարդակի բարձրացման, անապաստան կենդանիների խնդիրները:

Վերը նշված բնապահպանական խնդիրների լուծմանը կարելի է հասնել միայն համայնքի՝ էկոլոգիական կուլտուրա ունեցող անդամների (տարիքային բոլոր խմբերի բնակիչներ, գործարարներ, տեղական ինքնակառավարման մարմիններ) համատեղ ուժերով, ինչը կնվազեցնի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վտանգը, կբարելավի համայնքի անդամների կյանքի որակը և կբարձրացնի նրանց կենսամակարդակը:

4. Ապարան համայնքի էկոլոգիական խնդիրները աշխարհագրության դասերին ներառելու մի քանի օրինակ:

4.1. Էկոլոգիական դաստիարակությունը ներդասարանական պարապմունքների ժամանակ

- ***Արագած համայնքում ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ կառավարման խնդիրը***

9 դասարանում « ՀՀ ջրագրությունը: Գետերը » թեմայի ուսումնասիրության ժամանակ անդրադարձ է կատարվում Արագած համայնքի տարածքով հոսող Քասաղ գետի վտակ Գեղարոտի բնապահպանական հիմնախնդրին: Վերջին տարիներին փոխվել է Գեղարոտի գետի ջրի գույնը և որակը: Գետի ժանգագույն երանգի պատճառները և բնական են, և մարդածին: Բնականից գետի ջրում բարձր է երկաթի միացությունների պարունակությունը: Սակայն, երբ գետի վրա կառուցվեցին երկու ՓՀԷԿ-եր և գետի ջրի մի մասը ներառվեց խողովակների մեջ, գետը կորցրեց իր՝ բնական ինքնամաքրման հատկությունը: Որպես հետևանք փոխվեց գետի ջրի գույնը և որակը:

- ***Կենսաբազմազանության պահպանման խնդիրներ: Հրդեհներ ալպյան մարգագետիններում***

9 դասարանում « ՀՀ լանդշաֆտները» թեմայի ուսումնասիրության ժամանակ անդրադարձ է կատարվում Հայաստանի անասնապահության գլխավոր կերային բազայի՝ մերձալպյան ու ալպյան արոտներին ու խոտհարքերին, դրանց պահպանության խնդիրներին:

Բուսածածկույթի անհաշվենկատ օգտագործման պատճառով այդ լանդշաֆտներն այսօր ենթարկվում են դեգրադացիայի: Արագածի և Ծաղկունյաց լեռների մարգագետնային բուսածածկույթին առավելապես մեծ վնաս են պատճառում հրդեհները, հրկիզումները:

Բնակչության շրջանում տարածված է սխալ կարծիք, թե նշված տարածքների բուսականության, այսպես կոչված «խոտերի» այրումը նպաստում է հաջորդ տարի բույսերի վերարտադրությանն ու արդյունավետ աճին, փարթամացմանը:
Ցանկացած էկոհամակարգի որևէ բաղադրիչի փոփոխությունը ժամանակի ընթացքում հանգեցնում է մյուս բաղադրիչների, ուստի և ամբողջ համակարգի փոփոխությանը:

Այրման հետևանքով ոչնչանում է բույսերի ոչ միայն վերգետնյա մասը և սերմերը, այլ վնասվում է դրանց արմատային համակարգը, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է բուսական ծածկույթի աղքատացմանը:
Բացի այդ, մեծածավալ հրդեհները հաճախ դառնում են անտառների, այգիների ոչնչացման պատճառ, աղտոտում նաև մթնոլորտը և կարող են հանգեցնել էկոլոգիական աղետի:

- ***Հանքարդյունաբերության թափոնների՝ պոչամբարների ռեկուլտիվացման բնապահպանական խնդիրներ***

7-րդ դաս. «Հանքային ռեսուրսներ և Մետաղաձուլություն», 9-րդ դաս. «ՀՀ օգտակար հանածոները և Մետալուրգիական արդյունաբերություն» թեմաների ուսումնասի-րության ժամանակ անդրադարձ է կատարվում Ապարանից 10կմ հեռավորության վրա գտնվող Մելիքգյուղ համայնքի ոսկու հանքավայրի բնապահպանական խնդիրներին:
Այստեղ 2006 թ-ից ամերիկյան "Մեգո գոլդ" ՍՊԸ իրականացրել է Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքներ, կառուցել է 3 պոչամբարներ:

Հանքավայրը գտնվում է Մելիք գյուղից 3-3.5 կիլոմետր հեռավորության վրա, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջին և համարվում է շատ հեռանկարային տեղամաս:
Տեղամասը գուցե և հեռանկարային է, բայց գյուղը, որը ունի 350 տնտեսություն եւ ավելի քան 1200 բնակիչ, որոնց համար եկամտի հիմնական աղբյուրն են անասնապահությունն ու հողագործությունը, զարգացման հեռանկար չունի, քանի որ <u>ոսկու հանքավայրի շահագործումն ուղեկցվում էր բնապահպանական նորմերի խախտումներով, պայթեցումներով, ոսկու լվացումով, օդի, արոտավայրերի, խմելու եւ ոռոգման ջրերի աղտոտումով:</u>

- ***Օզոնային շերտի պահպանության բնապահպանական հիմնախնդիրը***

5-րդ դաս. **«**Մթնոլորտի կազմը**»** թեմայի ուսումնասիրության ժամանակ անդրադարձ է կատարվում օզոնային շերտի նշանակությանը, որպես կենդանի օրգանիզմների և ընդհանրապես կյանքի գոյության ու զարգացման պայմանի, ինչպես նաև օզոնային շերտի քայքայման պատճառներին, վնասակար հետևանքներին, արեգակի ուկտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանվելու միջոցներին: Երեխաներին ներկայացվում է << Օզոնային շերտի պահպանությունը >> շնորհանդեսը, ցուցադրվում՝ <<Օզի Օզոն >> մուլտֆիլմը: Երեխաներին բացատրվում է, որ մթնոլորտի որոշ հատվածներում, հատկապես Անտարկտիդայում, մարդու գործունեության հետևանքով օզոնի քանակը տարեցտարի պակասում է, առաջանում են <<օզոնային պատռվածքներ >>: Մուլտֆիլմի դիտումից հետո երեխաները գունավորում են մուլտֆիլմին վերաբերող ալբոմները, ծավալվում է քննարկում օզոնային շերտի պահպանության վերաբերյալ:

4.2. Էկոլոգիական դաստիարակությունը արտադասարանական պարապմունքների ժամանակ

- ***Ապարան համայնքի ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ կառավարման խնդիրը***

9 դասարանում «ՀՀ ջրային պաշարների պահպանությունը և ռացիոնալ օգտագործումը» թեմայի ուսումնասիրության ժամանակ անդրադարձ է կատարվում Ապարան համայնքի ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ կառավարման խնդրին:

Ներդասարանային պարապմունքների ժամանակ երեխաները իմանում են, որ չնայած ջրի խիստ պակասին՝ ջրային պաշարներն օգտագործվում են անարդյունավետ, ավելանում է ջրային պաշարների աղտոտվածությունը և կորուստը:

Արտադասարանայի պարապմունքի ժամանակ կազմակերպվել է Քասաղ գետի ջրի մոնիթորինգ: Ջրի մոնիթորինգի իրականացման համար օգտագործվել է

պարզագույն սարք, որը հնարավորություն է տալիս առանց լաբորատոր հատուկ պայմանների առկայության պարբերաբար իրականացնել ջրի որակի մոնիտորինգ և որոշել ջրի թափանցելիությունը, ջրի ջերմաստիճանը, ջրում լուծված թթվածնի քանակը և տոկոսը%-ը, ջրի PH-ը (թթվային և հիմնային որակը): Մոնիթորինգ իրականացվել է Քասաղ գետի երկու դիտակետերում: Առաջինը՝ Քասաղի հոսանքով վեր (1կմ հս.արմ.) և երկրորդը՝քաղաքի կենտրոնական մասում:

Մոնիթորինգի առաջին կետում, գետի ջրի որակական ցուցանիշները շատ ավելի բարձր էին, քան երկրորդ դիտակետում: Ստացված տվյալների համաձայն, երկրորդ դիտակետում ջրի որակը առաջինի համեմատ անբավարար էր՝ բարձր էր ջրի ջերմաստիճանը, ցածր էր թթվածնի պարունակությունը :

Մոնիթորինգի արդյունքները:

1. Երեխաները իմացան, որ Քասաղ գետի ջրի որակական ցուցանիշները շատ ավելի բարձր են այն տեղամասում,որտեղ բնակելի և տնտեսական կառույցների թիվը փոքր է: Գետի ջրի որակը անբավարար է այն տեղամասում,ուր լցվում են կոյուղաջրեր, բնակիչների կողմից գետի մեջ թափվում են կենցաղային թափոններ:.

2. Երեխաները ձեռք բերեցին ջրի անալիզի իրականացման համար սարքի օգտագործման հմտություն:

3. երեխաների մոտ ձևավորվեց էկոլոգիական խնդիրը դիտարկելու, հետազոտելու, նկարագրելու, բացատրելու ունակություններ, եզրակացություն անելու կարողություններ.

4. Երեխաները որոշեցին վերահսկել կենցաղային աղբի և շինարարական թափոնների՝ բնակիչների կողմից գետը մեջ թափելը:

5. Եզրակացրեցին, որ համայնքի բնապահպանական խնդիրների շարքում առաջնային է ջրամաքրման կայանի վերականգնումը:

- *Լուսանկարչական ցուցահանդես << Մեր համայնքը երեխաների աչքերով >>*

Ապարանի արվեստի դպրոցի ցուցասրահում կազմակերպված լուսանկարչական ցուցահանդեսը նպատակ ուներ քաղաքի բնակիչներին ներկայացնել մեր համայնքի բնապահպանական խնդիրները, դրանց առաջացման պատճառները, լուծման ուղիներ:

Լուսանկարների միջոցով երեխաները փորձեցին ցույց տալ առողջ, անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրենց իրավունքը և այն պահպանելու բոլորի պարտականությունը:

Նախնական պայմանավորվածության համաձայն 3 դպրոցներից յուրաքանչյուրը ցուցահանդեսին պետք է ներկայացներ 20 լուսանկար, որոնցից տասը վերաբերում են մեր քաղաքի բնապահպանական խնդիրներին:
Լուսանկարներից յուրաքանչյուրը պետք է ներկայացվեր համապատասխան մեկնաբանությամբ և խնդրի լուծման ուղիները իրենց պատկերացմամբ:
Ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքներին ընթացքում խորհրդատվություն ստանալու նպատակով աշխատանքային խմբերը մշտական կապի մեջ են եղել ուսուցիչների հետ:

Ցուսահանդեսին ներկայացված խնդիրերը բազմաթիվ էին ու բազմաբնույթ:
Դրանք վերաբերում էին քաղաքի անբավարար կանաչապատման, աղբահանության, գոմաղբի, Քասաղ գետի և քաղաքի աղբյուրների աղտոտվածության և ջրամաքրման կայանի վերականգնման անհրաժեշտության հարցերին:
Լուսանկարներով ներկայացվեց նաև աղբի ու չորացած տերևների, պլաստիկ շշերի, օգտագործված անվադողերի այրման վտանգավորության և նույնիսկ՝ թափառող շների խնդիրը: Երեխաները չմոռացան պարզաբանել ավտոլվացակայաններում օգտագործվող լվացող նյութերի բնապահպանական հետևանքները և ֆիլտրող սարքերի տեղադրման անհրաժեշտությունը:
Մեկնաբանվեց սննդամթերքում պարունակվող ԳՁՕ-ների խնդիրը, բնակչության կողմից լայնորեն օգտագործվող աերոզոլերի՝/դեզոդորանտների/ որպես օզոնային շերտի քայքայմանը նպաստող նյութերի վտանգը:
Մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց նաև ալպայն մարգագետիններում հրդեհներին և դրանց հետևանքների խնդրին:
Ցուցահանդեսի հյուրերը՝ ծնողները, քաղաքապետարանի ներկայացուցիչները, քաղաքի բնակիչները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին թե՛ լուսանկարների, թե՛ մեկնաբանությունների նկատմամբ, տրվեցին բազմաթիվ հարցեր :
Ցուցահանդեսի ավարտից հետո էլ շատերը շարունակում էին դիտել նկարները, քննարկել համայնքում առկա խնդիրները և դրանք մեղմելու միջոցներ:
<u>Օրվա միջոցառումը էկոլոգիական մտածողության և էկոլոգիական կուլտուրայի ձևավորման արդյունավետ միջոց էր՝</u> շրջակա միջավայրի հանդեպ հոգատարություն ցուցաբերելու և հասարակության ուշադրությունը կրկին անգամ բնապահպանական հիմնախնդիրներին սևեռելու առիթ:

5. Եզրակացություն

Այսպիսով՝ էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում դպրոցական աշխարհագրությունն ունի բացառիկ նշանակություն: Աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում են դպրոցականները ձեռք բերում բնապահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վերաբերյալ գիտելիքների , կարողությունների ու հմտությունների այն ծավալը, որն անհրաժեշտ է բնության, շրջակա միջավայրի հետ փոխհարաբերվելու բարոյական նորմերի և վարքագծի, սովորույթների՝ էկոլոգիական մտածողության, էկոլոգիական կուլտուրայի ձևավորման և զարգացման համար:

Սակայն դեռևս կան որոշակի դժվարություններ աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում լիարժեք էկոլոգիական կրթության իրականացման գործում: Այսպես, «»Բնագիտություն», «Աշխարհագրություն» առարկաների ուսումնական նյութի մեծ ծավալի և դասաժամերի խիստ սահմանափակության պատճառով հաճախ տվյալ առարկայի ծրագրում ներառված էկոլոգիական ուղղվածություն ունեցող թեմաները չեն հասցվում ուսումնասիրվել: Կարևոր է նաև էկոլոգիական ուղղվածության ուսուցողական, դիդակտիկ աուդիո, վիդեո նյութերով դպրոցի ապահովումը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործում կարևոր է երեխաների տեղական, համայնքային՝ անմիջապես իրենց շրջապատում գոյություն ունեցող էկոլոգիական խնդիրների իմացությունը, դրանց ուսումնասիրությունն ու հետազոտումը, դրանց շտկման գործընթացներին մասնակցությունը: Այդ ընթացքում երեխաների մոտ ձևավորում է էկոլոգիական խնդիրը դիտարկելու, հետազոտելու, նկարագրելու, բացատրելու ունակություններ, եզրակացություն անելու կարողություններ, ինչպես նաև համագործակցային գործունեության գիտակցում՝ որ բնապահպանական խնդիրների լուծմանը կարելի է հասնել միայն համայնքի անդամների համատեղ ուժերով (տարիքային բոլոր խմբերի բնակիչների, գործարարների, տեղական ինքնակառավարման մարմինների), ինչը կնվազեցնի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վտանգը, կբարելավի համայնքի անդամների կյանքի որակը և կբարձրացնի նրանց կենսամակարդակը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում ձեռք բերված գիտելիքները (օրինակ՝ հումքի համալիր և ռացիոնալ օգտագործման, անթափոն արտադրության, վերօգտագործման, եկամտաբերության և այլնի մասին) երեխաների մոտ ձևավորում ենևաև այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են խնայողությունը, տնտեսվարությունը, ձեռներեցությունը, որոնք անհրաժեշտ են լինելու նրանց հետագա կյանքի և աշխատանքային գործունեության ընթացքում:

6.Գրականություն

1. ՀՀ ՕՐԵՆՔԸ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
   https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117615

2. ՕՐՀՈՒՍԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատությանմատչելիության մասին. 30.10.2001
   https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849

3. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ .
   9 օգոստոսի 2007 թվականի N 1035-Ն Բաժին I-9 Շրջակա միջավայրի պահպանություն
   https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=39478

4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ>> ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ
   https://old-lib.armedu.am/resource/108

5. <<Բնօգտագործում և բնապահպանություն>>- 1999թ.
   Ա. Գասպարյան, Ռ. Մկրտչյան, Լ.Վալեսյան

6. << Բնապահպանության հիմունքներ Կրթության և գիտության էկոլոգիացում.Գլուխ XII. >> Լ.Ս. Մելքումյան, Մ.Հ. Գալստյան